Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Սովորողների ինքնության ձեւավորումը գրական տեքստի ուսումնասիրման ընթացքում
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Սուսաննա Սահակյան Վաչագանի Մանկավարժ Հայոց լեզու եւ գրականություն 5-9
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Նիկոլ Աղբալյանի անվան համար 19 հիմնական դպրոց, Տերյան 54 +37410587350 nikol.aghbalyan@list.ru yerevan19.schoolsite.am

Բովանդակություն

Ներածություն----------3
Հետազոտության նպատակով անցկացվող դասի ընթացքը----------4
Գրականության ակնարկ----------5
Եզրակացություններ, առաջարկություններ----------8
Օգտագործված գրականության ցանկ----------9
Հավելվածներ----------11

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հետազոտական աշխատանքի նպատակներն են. ● Ճանաչել տալ բնության եւ մարդու միջեւ եղած կապը, տեսնել, ընկալել եւ վերարտադրել այն: ● Գոյապայքարը: ● Մայր տեսակը մայր բնության մեջ: ● Ձեւավորել ինքնուրույն մտածողություն: Հետազոտական հարցն է՝ ի՞նչ մեթոդներ եւ հնարներ կարելի է կիրառել սովորողների ինքնության ձեւավորման եւ զարգացման համար 7-րդ դասարանում «Կանաչ դաշտը» պատմվածքի օրինակով:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Կարեւոր է, որ աշակերտը կարողանա դրսեւորել սեփական կարծիք, արժեւորի մայր բնությունը մաթեւոսյանական աշխարհընկալմամբ եւ ձեւավորի վերաբերմունք մայրերի նկատմամբ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունն ուղղված է սովորել սովորելուն եւ մշակութային:
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Դիրքորոշում եւ արժեք

Հետազոտության նպատակով անցկացվող դասի ընթացքը

Հետազոտության թեմայի շրջանակներում իրականցվել է դասաժամ հետեւյալ կառուցվածքով.

- Առարկա՝ գրականություն
- Դասարան՝ 7-րդ
- Թեման՝ «Կանաչ դաշտը», Հրանտ Մաթեոսյան
- Հիմնական հասկացություն՝ ինքնություն
- Ենթահասկացություն՝ արժեւորում
- Խաչվող կամ ընդհանրական հասկացություն՝ անհատական եւ մշակութային արժեհամակարգ
- Միջառարկայական կապեր՝ բնագիտություն, աշխարհագրություն, գրականագիտություն, նկարչություն
- Անհրաժեշտ նյութեր՝ Համո Սահյանի «Կանաչ դաշտը» պատմվածքը, նկարչական պարագաներ, թղթեր, պաստառներ

Դասն անցկացվում է ԽԻԿ(Խփթանում, իմաստի ընկալում եւ կշռադատում) համակարգով: Խթանման փուլում տրվում է հինգ րոպեանոց շարադրանք, որտեղ ներառվում են նաեւ բառեր, որոնք կան պատմվածքում: Գրելուց հետո երկու-երեք աշակերտ կամավորության սկզբունքով ընթերցում են, որից հետո ուղղորդված ընթերցանություն է իրականացվում կանգառներով: Առաջին կանգառից հետո աշակերտներն իրենց գրածի եւ բնագրի միջեւ գտնում են ընդհանրություններն ու տարբերությունները: Դրանից հետո միջառարկայական կապն ապահովելու համար իրականացվում է խմբային աշխատանք, դասարանը բաժանվում է չորս խմբի՝ բնագետներ, աշխարհագետներ, գրականագետներ եւ նկարիչներ, եւ տեքստի շրջանակում խմբերից յուրաքանչյուրը տեղեկություններ է հաղորդում, օրինակ՝ բնագետները՝ գայլերի եւ ձիերի մասին, աշխարհագրագետները՝ պատմվածքի տեղանքի մասին, գրականագետները պատմվածքը վերածում են առակի, իսկ նկարիչները պատմվածքում առկա գույների միջոցով ներկայացնում են թե՛ գոյապայքարը, թե՛ բնության եւ մարդու կապը:

Կշռադատման փուլում «մայր» բառով կազմում են պրիզմա եւ սկսում քննարկել: Դասի վերջում կատարվում է անդրադարձ հետեւյալ հարցերի միջոցով՝ ի՞նչ արեցի եւ ի՞նչ սովորեցի:

Գրականության ակնարկ

Հետազոտական աշխատանք կատարելու համար անհատը հաճախ ուսումնասիրում է փորձառու մանկավարժների, գրականագետների եւ լեզվաբանների տեսակետները, հիմնավորված կարծիքներն ու սահմանումները, անցկացնում սեփական պրիզմայով եւ գալիս եզրահանգումների:

Այսպես, օրինակ, «Կրկնության լեզվաբանաստեղծակն արժեքը գեղարվեստական խոսքում» հետազոտության հեղինակ Աննա Մելքոնյանն անդրադառնում է կրկնությանը՝ որպես լեզվաբանական արժեք ստեղծող գործոն գեղարվեստական խոսքում. «Կրկնություններն ուժեղացնում ենք խոսքի արտահայտչականությունը: Գրողի անհատականությունը երեում է այն տեսակի գործածության մեջ, որը կոչվում է շղթայակցում»:

Վերոնշյալն առկա է նաեւ Հրանտ Մաթեւոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքում: Մաթեւոսյանն է, որ նախադասությունների «թվացյալ» կրկնությամբ մեր մեջ հաստատում է այն միտքը, ինչ որ ինքն է կարեւորում եւ ուզում, որ մեզ համար էլ դառնա հասկանալի եւ էական. չէ՞ որ հաճախ մենք՝ ուսուցիչներս էլ ենք կրնկնում նախադասություններ, սահմանումներ, որպեսզի սովորեցնենք աշակերտներին ճշմարտությունը ՝ մեջբերելով. «Կրկնությունը գիտության մայրն է» ասացվածքը:

Անի Վալերիի Հակոբյանը իր «Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձեւավորման ուղիները» գրքում անդրադառնում է ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների եւ դրանով պայմանավորված դպրոցականների արժեհամակարգին ու հետաքրքիր վերլուծություններ անում. «Հոգեկան եւ նյութական արժեքների ձեւավորման պատմական գործընթացը հաստատում է, որ բնության մեջ նորը, անծանոթը, բայց օգտակարն ու կարեւորն օգտագործելու մարդու ունակությունները միշտ եղել են ինքնության ձեւավորման երաշխիք: Ժամանակակից աշխարհում իրականացվող տեղաշարժերը(սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ժողովրդավարական) թելադրում են մարդկանց համագոյակցության նոր պայմաններ: Արժեհամակարգի ձեւավորման գործում առաջատար դեր է վերապահված կրթական ոլորտին: Արագ փոփոխվող աշխարհում օրախնդիր է դառնում ուսումնական դասընթացների ընթացքում արժեքային ներուժի բացահայտումը, ինչն էլ նպաստում է անձի դիրքորոշում ունենալուն»:

Անհատի ձեւավորումը սկսում է դեռահասության տարիքից եւ ուսուցիրներիս կողմից շատ կաևեւոր է ճիշտ ընտրված ստեղծագործությունների միջոցով նրանց մեջ սերմանել արժեքներ: Եվ ուղղությունն այնպես տանել, որ աշակերտն ինքն ըմբռնի ու բացահայտի այդ արժեքները:

Ինչո՞ւ որոշեցի ինքնության ձեւավորման համար ընտրել Հրանտ Մաթեւոսյան: Մի պարզ պատճառով. Մաթեւոսյանը բնագետ-բնագիր է, խորը փիլիսոփա, մարդ-գրող, ով բնությունը տեսնում, ընկալում եւ վերարտադրում է իր ներսից՝ ապրելով այն կերպարի վիճակում, որին ինքը կերտում է:
Կենդանիների բնազդային վարքն իր տեղը զիջում է մարդու գիտակցական գործունեությանը, որը փոխում է իրեն շրջապատող աշխարհը:

Առհասարակ հայ դասական գրականության մեջ քիչ չեն կենդանիների կերպավորումները: Թումանյան, Չորյան, Համաստեղ, Բակունց, Մնձուրի. բոլորն էլ ունեն

ստեղծագործություններ, որտեղ պատմում են մարդ-կենդանի հարաբերության, կենդանիների միջոցով մարդկանց աշխարհի, ինչպես նաեւ հենց իրենց՝ կենդանիների մասին: Չմոռանանք նաեւ բանահյուսության նմուշներից առակի մասին, որտեղ այլաբանորեն ներկայացվում էին մարդկանց բնավորության թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը՝ եզրակացությունները թողնելով մեզ:

Այս ստեղծագործությունը գրականագետ Սուրեն Աղաբաբյանն անվանել է «Կանաչ հովտի ասքը» իր «20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներ» աշխատությունում: Աղաբաբյանը կարեւորել է գրողի փիլիսոփայական-գեղագիտական նոր աշխարհը: «Հեղինակի համար, անկախ երեւույթի փոքր կամ մեծ լինելուց, ոչ միայն կախման մեջ է մեկը մյուսից, այլ, որ ամենակարեւորն է, գտնվում է շարժման մեր եւ մշտապես նոր է ու թարմ: Իսկ շարժման ընթացքում տեղի են ունենում պայթյուններ:»

Ըստ էության պատերազմներ տեղի են ունենում նաեւ բնության մեջ, որը կոչվում է գոյության կռիվ: Կանաչ հովտի դրաման վերակառուցելու համար Մաթեւոսյանը դիմել է պատումային եղանակին, որի ասացող-դերակատարը ինքն է, ով ծանոթ է այդ վայրերին, իսկ կենդանական բարքերին քաջածանոթ է փոքրիկ հովիվը, ով էլ հենց բացում է պատմության կծիկը՝ ժայռերին բախվող կայծակների, ապա մյուս նախադրամատիկ պահերի: «Կայծակը չոր ճայթյունով բախվեց ծառին, մի կողմ շպրտվեց եւ թաղվեց կանաչ գետնի մեջ: Ժայռը կարծր էր. կայծակը հազիվ թե կարողացավ գորշ այդ ժայռից պոկել քարի մի երկու փշուր:

….Գարունների եւ ամառների բոլոր կայծակները թաղվում էին ժայռի տակ, եւ մոտիկ կաղնին միշտ ամեն ճայթյունի վախից սարսափում եւ իր մտքում կաղնիորեն շնորհակալ էր լինում ժայռին այն բանի համար, որ իրեն փրկում է խանձվելուց»:

Բնության բոլոր տարրերը՝ ժայռը, կաղնին, մասրենին, երկինքը, ամպը, կարմիր պառավ ձին, քուռակը, ծեր հովիվը, փոքրիկ հովիվը, գամփռ շները, ոչխարները, մայր գայլը, բոլորը ներկայացվում են այս իրադրության մեջ: Բայց դրամատիկ պահերի հերոսներն են կարմիր պառավ ձին, քուռակը, մայր գայլը:

Հետազոտության թիրախ բառը «մայրն» է, քանզի Մաթեւոսյանի նպատակներից մեկը եղել է նաեւ բնության մեջ կերտել ոչ միայն մարդու մոր, այլեւ մայր ձիու կամ մայր գայլի կերպարը, ինչը նրան լիովին հաջողվել է:

«Կայծակն արդեն դադարել էր. մայր ձին կարողացավ իր լանջի տակ պատսպարել վերջին աստղազարդ քուռակին, բայց միեւնույն է վտանգի հոտ էր զգում, սակայն հովիտն այս անգամ դավաճանում էր ձիուն. հովտում թշնամի կար, բայց նա չէր մատնում թշնամու ձայնը եւ թշնամու հոտը: Կարմիր պառավ ձին սիրտ չէր անում շնչել. վախենում էր իր թոքերի աղմուկի մեջ կորցնի թշնամու թաքուն շնչառությունը, չէր թարթում աչքերը. վախենում էր, որ իր աչքաթարթի հետ թշնամին տեղից կցատկի, եւ ինքը չի հասցնի նկատել նրա ցատկը»:

Իսկ ժայռը նիրհում էր, անշարժ կանգնած էին կաղնին, մասրենին, ու այդ պահին մայր ձին՝ կարմիր պառավ ձին զգաց գայլի զզվելի հոտը:

Երկու մայրերը պայքարում էին կանաչ հովտում: Մեկը՝ իր զավակին՝ աստղազարդ քուռակին պաշտպանելու, իսկ մայր գայլը իր երեք ձագուկներին սոված չթողնելու համար:

«Կյանքը հո չէր կարող լինել այդքան դաժան, որ աստղազարդ քուռակն ապրեր ընդամենը մեկ ամիս»,-այսպես էր մտածում պառավ կարմիր ձին:

«Բախտը հո չէր կարող լինել այդքան անողոք, որ իր մեկ օրվա աշխատանքն անտեղի անցներ, եւ ինքը ձագերի մոտ դառնար քաղցած ու դատարկ»,-մտածում էր մայր գայլը: Տվյալ իրադրության մեջ Մաթեոսյանը ներկայացնում է անհավասար պայքար. ձին անազատ էր, կապված, քանի որ ընտանի կենդանի է եւ մարդու կողմից միշտ պաշտպանվում է, իսկ գայլն ազատ բնության մեջ գիշատիչ էր, որը, սակայն, մայրական բնազդի, իր տոհմի, իր ձագերին պահպանելու համար էր պայքարում: Սա միայն չի խորհրդանշում աշխարհի չար ու դաժան սկիզբը, ինչպես թվում է արտաքինից, այլ ավելի խորն է:

Այո՛, քուռակը փրկվում է. փոքր հովիվը նկատում է ու ձայն տալիս Թոփուշին, Բոբին, Սեւոյին, Բողարին, Չալակին, Չամբարին: Իսկ գայլին հաջողվում է փախչել, այլապես ձագերը որբ կմնային:

Քուռակը կանգնած էր մոր մոտ եւ սպասում էր նրա ելնելուն, սակայն մայրը չէր ելնում, բայց վերջին շնչում էլ շարունակում էր կաթ տալ իր այլեւս որբ քուռակին,որն աստղազարդ էր, սեւ բաշն ու պոչը՝ գանգուր, սրունքը՝ սպիտակ, ճակատին՝ աստղաձաղիկ, որը մի քիչ հիմարիկ էր իր փոքրության պատճառով, վարար-վարար կաթ: Պատմվածքում պայքարին զուգահեռ փոխվում են գույները: Մայրամուտին ամբողջ հովիտը լուսավոր ու կանաչ էր եւ սեւ: Շատ մուգ սեւ էր պառավ կարմիր ձիու շուրջը: Պառավ ձիու մարմինն ընկած էր այդ սեւ շրջանակի մեջ, ուր պայքարել էին ձին եւ գայլը: Մայրամուտը կարմիր էր: Այս գունախառնուրդը՝ կանաչ-կարմիր-սեւ, արտահայտում է կյանքի մի հատվածի պարունակությունը՝ նախնական գեղեցկության վեհությունից մինչեւ փլուզում, որը վերջնական չէ, այլ հավիտենական, որովհետեւ կյանքը նորից վերածնվում է:

Ու փոքրիկ հովիվն իր ասքային պատումը նորից շարունակում է այն կետից, որտեղից սկսել էր մի քանի տարի առաջ՝ կայծակի ճայթյունով:

Կանաչ դաշտ, որովհետեւ կյանքը շարունակվեց, անկախ այն բանից, որ մենամարտի տեղում հողը վիրավորված էր եւ երեք տարի չէր կանաչում:

«Մաթեւոսյանին հաջողվել է թափանցել կյանքի բարձրագույն շերտի՝ աշխարհի պատումի անսահմանության մեջ եւ դրան հաղորդակից դարձնել նաեւ մեզ».Սուրեն Աղաբաբյան:

Օգտագործված մեթոդները, գործիքները	• 5 րոպեանոց շարադրանք • Ուղղորդված ընթերցանություն եւ խմբային աշխատանք • Պրիզմա • Անդրադարձ • Տեսացրիչ
Իրականացման ժամանակահատվածը	1 ամիս

Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	7-րդ դասարան, 18 աղջիկ/12 տղա

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Դասի վերջում ելնելով առաջադրված նպատակներից եւ հետազոտության ընթացքից գրանցվել է հետեւյալ վերջնարդյունքը. ● Աշակերտները արտահայտել են սեփական կարծիք ստեղծագործության հերոսների վարքագծի վերաբերյալ ● Արժեւորել են մայր բնությունը մաթեւոսյանական աշխարհընկալմամբ ● Դրսեւորել են ստեղծարար միտք,այսինքն՝ խմբային աշխատանքը ծառայել է իր նպատակին ● Հասկացել են մայրերի դերը ոչ միայն մարդկային կյանքում, այլեւ կենդանական աշխարհում ● Վերոնշյալները նպաստել են, որպեսզի աշակերտների մոտ ձեւավորվի ինքնուրույն մտածողություն
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Ա.Մելքոնյան, «Կրկնության լեզվաբանաստեղծակն արժեքը գեղարվեստական խոսքում», Երեւան, 2013
2. Ա.Վ.Հակոբյան, «Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձեւավորման ուղիներ», Երեւան, 2014
3. Ս. Աղաբաբյան, «20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներ», 2-րդ հատոր, 1984
4. 7-րդ դասարանի գրականության դասագիրք, 2016

Հավելվածներ

Պատկեր 1. Դասաժամի ընթացքում ձեւավորված բնագետների խումբ

Պատկեր 2. Դասաժամի ընթացքում ձեւավորված աշխարհագրագետների խումբ

Պատկեր 3. Դասաժամի ընթացքում ձեւավորված նկարիչների խումբ

Պատկեր 4. Դասաժամի ընթացքում ձեւավորված գրականագետների խումբ



Պատկեր 5. Աշխարհագրագետների խմբային աշխատանքի վերջնարդյունք



Պատկեր 6. Գրականագետների խմբային աշխատանքի արդյունքում ստացված առակ

Պատկեր 7. Նկարիչների խմբային աշխատանքի վերջնարդյունք



Պատկեր 8. Գրականագետների խմբային աշխատանքի վերջնարդյունք

Պատկեր 9. Նկարիչների խմբային աշխատանքի վերջնարդյունք

Պատկեր 9.1 Նկարիչների խմբային աշխատանքի վերջնարդյունք մաս



Պատկեր 10. Բնագետների խմբային աշխատանքի վերջնարդյունք



Պատկեր 11. Հետազոտության դասաժամի ընթացքում աշակերտների պատկերած պրիզման



Պատկեր 12. Հետազոտության դասաժամի ընթացքում «անդրադարձ» մեթոդի կիրառման արդյունքը